Հայցվորի կողմից վճարվել է օրենքով սահմանված պետական տուրքի գումարը, միաժամանակ վերջինիս օգտին բավարարված հայցապահանջ առկա չէ, պետական տուրքից զատ այլ դատական ծախսեր չկան, ուստի Դատարանը դատական ծախսերի հարցը համարում է լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-րդ, 192-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Մ. Բուատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/1ԱԼ ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 17.01.2024 թվականի թիվ 2 արձանագրությամբ «Մ. Բուատ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և հայտը մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Ս.ՈՒԼԻԽԱՆՅԱՆ

Վճիռը «___» «_____» 2024 թվականին մտել է օրինական ուժի մեջ:

ԴԱՏԱՎՈՐ Ս. ՈՒԼԻԽԱՆՅԱՆ